# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2024թվականի N 025-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 1-ը մարտի 2024 թվականի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 01.03.2024թվականի թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ղեկավարի 2023թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

7. Արցախի Հանրապետությունից տեղահանված և Ագարակաձոր բնակավայրում մահացած Ռոզա Հարությունյանի հուղարկավորության համար կատարած ծախսերը փոխհատուցելու նպատակով գումար հատկացնելու մասին:

8. Արենի համայնքի 2023թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

9. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,05886հա բնակավայրերի նշանակության հողամասը և օրինականացված բնակելի տունը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

10. Արենի համայնքում վոլեյբոլի մրցաշար կազմակերպելու և մասնակից թիմերին խրախուսելու նպատակով գումար հատկացնելու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 18.09.2020թվականի թիվ 101-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցված ՄԱՋ մակնիշի վակումային, ԿԱՄԱԶ մակնիշի ինքնաթափ ավտոմեքենաների մատուցած ծառայությունների դիմաց սակագներ և ՄԱՋ մակնիշի վակումային մեքենայի վարորդի ու օգնականի համար վարձատրության չափ սահմանելու մասին:

12. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի մշակույթի տան շենքից առանձնացված 3քմ. հատվածը Ամիո բանկին վարձակալությամբ հատկացնելու մասին:

13. Արենի համայնքի ավագանու 28.11.2023թվականի թիվ 150-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

14. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -12

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**